

**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐՂԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 26**

29-ը Հոկտեմբերի 2013թ.

գ. Վարդաձոր

**ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2013թ. հոկտեմբերի 23-ի թիվ 187-Ա որոշմամբ
ներկայացված առաջարկությունների քննարկումը**

Քննարկելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2013թ. հոկտեմբերի 23-ի թիվ 187-Ա որոշումը՝ Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 7-րդ կետով.

Համայնքի ավագանին որոշում է՝

Վերահսկել Վարդաձոր համայնքի ղեկավարին իր լիազորությունների իրականացման նկատմամբ և պահանջել՝

1. Հարկերը ժամանակին չվճարողների նկատմամբ կիրառել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջը:
2. Առևտրի և ծառայությունների ոլորտում հսկողություն իրականացնել «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան:
3. Առևտրի և ծառայությունների ոլորտում իրականացված հսկողության արդյունքների վերաբերյալ պարբերաբար մարզպետարան ներկայացնել հաշվետվություն՝ «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան:
4. Ավագանու նիստերը հրավիրել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջների համաձայն:
5. Համայնքի ղեկավարի անհատական ակտերն ընդունելուց հետո 2-օրյա ժամկետում դրանք տրամադրել ավագանու անդամներին և փակցնել բնակչության համար տեսանելի վայրում:
6. Հաստատել և գործողության մեջ դնել ավագանու և համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը:
7. Վարել համայնքի ղեկավարի, ավագանու և գյուղապետարանի աշխատակազմի կողմից ընդունված իրավական ակտերի 2010-2011թթ. հաշվառման մատյանները:

Վարդաձորի գյուղապետ՝ _____ Ռ. Սիրականյան